

**ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՁ ՏԵՂ ԳՏԱԾ ՄԻ ՔԱՆԻ
ՏԱՐԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՑԱՆ

Գիտության ցանկացած ոլորտում բնական երևույթ են տարըմբոնումները՝ ուսումնասիրության նույն առարկայի վերաբերյալ տարբեր կարծիքներն ու մեկնաբանությունները: Դրանց շարքում երբեմն տեղ են գտնում և բավական լայն տարածում ստանում տեսակետներ, որոնք համարժեքորեն չեն արտացոլում իրականությունը և կամ հակասություններ են առաջացնում տեսության մեջ և նույնիսկ գործնականում: Լեզվաբանությունը գերծ չէ այս երևույթից, ուստի հարկ կա պարբերաբար անդրադառնալու տարածված և նույնիսկ կարծրատիպերի վերածված տարըմբոնումներին ու պարզաբանելու դրանք:

Հոդվածում քննարկվում են գիտական, ինչպես նաև մանկավարժական նշանակություն ունեցող այդ կարգի ինդրահարույց տեսակետների առնչվող երեք հարցեր լեզվաբանությունից, մասնավորապես հայերենագիտությունից: Փորձ է արվում հիմնավորելու, որ 1) **մ** և **ն** հնչյունները ոչ թե հպական (պայթական) կամ շփական, այլ նեղվածքային բաղաձայններ են, 2) հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները ոչ թե բառերի տեսակներ են, այլ բառերի ձևափոխության հարաբերության տեսակներ, 3) *այսինքն*, *այն է* բառերը ոչ թե համադասական կամ ստորադասական շաղկապներ են, այլ բացահայտման վերաբերականներ:

1. Ի՞նչ բնույթ ունեն ռնգային ձայնորդ մ և ն հնչյունները՝ ըստ արտաբերման եղանակի

Ռնգային **մ** և **ն** հնչյունները տարբեր հետազոտողներ բնութագրում են մերթ իբրև հպականներ, մերթ՝ պայթականներ, մերթ՝ շփականներ, մերթ՝ պարզապես ձայնորդներ: Մ. Աբեղյանը, նրան հետևելով՝ Գ. Ջահուկյանը, ապա Լ. Խաչատրյանը դրանք իրավացիորեն համարում են ոչ պայթական, ավելի ստույգ՝ ձայնորդ¹: Մասնավորապես Գ. Ջահուկյանը նշում է, որ այդ ձայնորդները կազմվում են բերանային փակվածքի և ռնգային բացվածքի միաժամանակյա առկայությամբ: Մյուս կարծիքները, ինչպես կտեսնենք ստորև, ընդունելի չեն: Հ. Աճառյանը և Վ. Առաքելյանը **մ** և **ն** հնչյունները համարում են պայթական², Գ.

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկեր, հ. 2, Եր., 1974, էջ 70, Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Եր., 1974, էջ 70, Լ. Խաչատրյան, Լեզվաբանության ներածություն, Եր., 2008, էջ 85, 90:

² Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Եր., 1971, էջ 192-193, Վ. Առաքելյան, Ժամանակակից հայոց լեզվի հնչյունաբանություն, Եր., 1955, էջ 28-31:

Սևակը, Ա. Մարգարյանը, Լ. Եզեկյանը՝ շփական³, Ա. Սուքիասյանը և Ա. Խաչատրյանը հպական⁴: Իսկ Է. Աղայանը գրում է, թե դրանք ձայնորդ են, որ ավարտվում են հպվածքի պայթյունով⁵: Փաստորեն ավելի տարածված է հպական լինելու կարծիքը, մանավանդ եթե նկատի ունենանք, որ «պայթական» և «հպական» եզրույթները հաճախ հոմանիշներ են համարվում:

Այս տարակարծության պատճառը տարբերակիչ հատկանիշի ընտրության մեջ է: Ըստ արտաբերման եղանակի տարբերակվող հպականների (պայթականների, պայթաշփականների) և ոչ հպականների (շփականների, ձայնորդների, ձայնավորների) տարբերակիչ հատկանիշը օդի հոսանքի անխոչընդոտ անցնել/չանցնելն է բերանի կամ քթի խոռոչով: Այդ հատկանիշով **մ** և **ն** ձայնորդ հնչյունները հպական (կամ պայթական) չեն, այլ նեղվածքային են, քանի որ դրանց արտաբերման ժամանակ առկա է բավական լայն նեղվածք (բացվածք), և օդի հոսանքն անխոչընդոտ անցնում է քթի խոռոչով⁶: Մինչդեռ դրանք հպական համարողները որպես տարբերակիչ հատկանիշ են վերցնում որևէ հպվածքի առկայություն/բացակայությունը՝ չնկատելով, որ հայերենի անխոչընդոտ հնչյունների արտաբերմանը բնորոշ է որևէ հպվածքի առկայությունը: Սակայն հպվածքները լինում են տարբեր տեղերում, տարբեր բնույթի, և մի շարք հնչյունների բնորոշ է երկու տարբեր հպվածքների միաժամանակյա առկայություն: Հետևաբար հպվածքի առկայության/բացակայության հատկանիշով հնչյունները (ոչ միայն հայերենի) բաժանվում են երեք խմբի. ա) ռնգայնացած ձայնավորներ, որոնք արտաբերվում են առանց որևէ հպվածքի [անհպվածք հնչյուններ], բ) չռնգայնացած ձայնավորներ, ձայնորդներ և շփականներ, որոնք արտաբերվում են մեկ հպվածքով, որը փակում է կա՛մ քթի, կա՛մ բերանի խոռոչը [միահպվածք հնչյուններ], գ) պայթականներ և պայթաշփականներ (կիսաշփականներ), որոնք արտաբերվում են երկու հպվածքով, որոնցով միաժամանակ փակվում են թե՛ քթի, թե՛ բերանի խոռոչը՝ առաջ բերելով օդի հոսանքի ակնթարթային դադար և դրան հաջորդող աղմուկի պոռթկում՝ պայթյուն կամ կիսապայթյուն [երկհպվածք հնչյուններ]: Սակայն այսպես դասակարգելու փոխարեն մի շարք մասնագետներ պարզապես հպական են համարում երրորդ խմբի հնչյունները և երկրորդ խմբից **մ** և **ն** հնչյունները:

Մ և **ն** հնչյունները երկհպվածքայիններին հավասար հպական

³ Տե՛ս **Գ. Սևակ**, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 88, **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, Եր., 1997, էջ 37-38, **Լ. Եզեկյան**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 32, 34:

⁴ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու. հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Եր., 1982, էջ 58-59, **Վ. Առաքելյան**, **Ա. Խաչատրյան**, **Ս. Էլոյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 1, Եր., 1979, էջ 92-95:

⁵ Տե՛ս **Է. Աղայան**, Լեզվաբանության հիմունքներ, Եր., 1987, էջ 217-218:

⁶ Տե՛ս **Վ. Առաքելյան**, **Ա. Խաչատրյան**, **Ս. Էլոյան**, նշվ. աշխ., էջ 92-95:

(կամ պայթական) համարելու սխալը սկսվում է նրանից, որ փափուկ քիմքի առաջացրած հավածքը հաճախ անտեսվում է հատկապես ոչ ռնգային ձայնորդների և շփականների արտասանությունը նկարագրելիս: Մինչդեռ **մ**-ի և **ն**-ի դեպքում բերանի խոռոչում առկա հավածքի նշանակությունը գերազնահատվում և ուռճացվում է այն աստիճանի, որ անտեսվում է այդ հնչյուններին բնորոշ նեղվածքը (բացվածքը): Մխալի հիմքը հոգեբանական է: Քթի խոռոչն արգելափակող հավածքը անտեսվում է, քանի որ դա առկա է հայերենի հնչյունների 95 %-ի դեպքում (այլապես «հպական» կհամարվեին հայերենի բոլոր հնչյուններն անխտիր), իսկ դրա փոխարեն բերանի խոռոչի փակվածքի նշանակությունն ուռճացվում է, քանի որ դա նեղվածքի հետ միասին առկա է միայն երկու հնչյունի դեպքում:

Մ և **ն** հնչյունները մեկ հավածքով արտաբերվող մյուս ձայնորդներից, ձայնավորներից ու շփականներից տարբերվում են նրանով, որ այդ հավածքը բերանի խոռոչում է, իսկ մյուսների դեպքում՝ քթի խոռոչի մուտքի մոտ փափուկ քիմքի միջոցով⁷: Այս տարբերության շնորհիվ **մ** և **ն** հնչյունները դառնում են ոչ թե հպական (պայթական), այլ նեղվածքային ռնգային, քանի որ օդի հոսանքը ազատ անցնում է ոչ թե բերանի, այլ քթի խոռոչով: Այլ կերպ ասած՝ բոլոր ձայնորդներն էլ (ինչպես և շփականները) արտաբերվում են մեկ հավածքի և նեղվածքի միաժամանակյա զուգակցմամբ: Միայն թե **մ**-ի և **ն**-ի դեպքում հավածքը բերանի խոռոչում է, նեղվածքը՝ քթի խոռոչում, իսկ մյուսների (լ, ռ, ռ, յ) դեպքում՝ ճիշտ հակառակը՝ հավածքը քթի խոռոչի մուտքի մոտ է, նեղվածքը՝ բերանի խոռոչում:

Ոչ ճիշտ դասակարգման հետևանքով փաստորեն իսկական պայթականների (հպականների) հետ նույն խմբին են հաճախ դասվել **մ** և **ն** ձայնորդները, որոնք որոշակի պայմաններում հանդես են բերում նույնիսկ ձայնավորական հատկանիշեր և դառնում վանկարար:

Հետաքրքիրն այն է, որ **մ** և **ն** հնչյունները սխալմամբ հպական համարողները հաճախ ճիշտ են նկարագրում դրանց կազմավորման ընթացքը: Այդ ճիշտ նկարագրությունը ներառում է նաև այն, որ **մ**-ն և **ն**-ն արտաբերվում են մեկ հավածքով, որով արգելափակվում է բերանի խոռոչը, և օդն անարգել անցնում է քթի խոռոչով⁸: Այստեղ հարկ է ավելացնել հետևյալը: Այդ հավածքը անհրաժեշտության դեպքում բացվում է ոչ թե հնչյունի արտաբերման պահին (ինչպես պայթականների դեպքում), այլ արտաբերումից հետո՝ ելքի ժամանակ: Իսկ եթե հաջորդող հնչյունը պահանջում է նույնպիսի (նույնադիրք) հավածք (**մ**-ից հետո՝ **մ**, **բ**, **պ** կամ **փ**, **ն**-ից հետո՝ **ն**, **դ**, **տ** կամ **թ**), ապա այն կարիք չի լինում բացելու (Էմմա, սմբակ, ըմպել, ճամփա, աննկուն, սնդիկ, անտառ, անթառամ): Հավածքը բացելու կարիք չի լինում նաև այն դեպքում, երբ **ն**-ն

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 13:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 93-94:

կամ մ-ն եզրափակում է հնչաշղթան (Գնում եմ տուն: Սկսվեց կտրուկ անկում):

Եվ ամենակարևորը. այդ հպվածքը օդի հոսանքի դադար ընդհանրապես չի առաջացնում, քանի որ միաժամանակ բաց է լինում քթի խոռոչը: Դեռ ավելին, նախորդ ձայնավորն անգամ հաճախ մասամբ ռնգայնանում է քթի խոռոչի ժամանակից շուտ բացվելու հետևանքով: Այսինքն՝ ն-ին և մ-ին բնորոշ չէ հպականների (պայթականների) ամենակարևոր տարբերակիչ հատկանիշը՝ օդի հոսանքի ակնթարթային դադարը: Ուստի ճիշտ չէ Ա. Սուքիասյանի նկարագրությունը հատկապես մ-ի համար այն առումով, որ դրա արտասանության բուն պահին վերագրվում է պայթում⁹:

Ա. Խաչատրյանը ճիշտ նկատում է, որ «հպման առաջացումը դեռ չի նշանակում, որ հնչյունը անպայման պետք է լինի պայթական, և նեղվածքը իր հերթին չի ենթադրում շփականություն»¹⁰: Այս միտքը պետք է շարունակել հետևյալ պնդումով: Հպվածքի առկայությունը չի բացառում նեղվածքի կամ նույնիսկ լրիվ բացվածքի միաժամանակյա առկայությունը: Այսինքն՝ մեկ հպվածքի առկայությունը բավարար չէ հնչյունը բնութագրելու որպես հպական (պայթական), նեղվածքային կամ նույնիսկ բացվածքային (ձայնավոր): Ինչպես նշվեց, միայն մեկ հպվածքը բնորոշ է թե՛ շփականներին, թե՛ ձայնորդներին, թե՛ ոչ ռնգային ձայնավորներին: Մ և ն հնչյունների արտասանության ժամանակ առկա է թե՛ հպվածք, թե՛ բավական լայն նեղվածք, ինչպես մյուս բոլոր ձայնորդների դեպքում: Հետևաբար դրանք չի կարելի դասել հպական (պայթական) բաղաձայնների խմբին (որոնցից ոչ մեկին բնորոշ չէ նեղվածքը), այլ պետք է դասել նեղվածքայինների խմբին, ինչպես մյուս ձայնորդները: Այսպիսի դասակարգման գլխավոր փաստարկները, կրկնում ենք, երկուսն են. 1. ն-ին և մ-ին բնորոշ է նեղվածքայինների ամենաեական հատկանիշը՝ նեղվածքի առկայությունը, որով ազատ անցնում է օդի հոսանքը, 2. նրանք զուրկ են հպականների ամենաեական հատկանիշից՝ օդի հոսանքի ակնթարթային դադարից:

Ի դեպ, առաջնալեզվային ռնգային ն ձայնորդը հայերենում ունի իր հետնալեզվային դիրքային տարբերակը, որ արդյունք է հետընթաց առնմանության: Դա առաջանում է, երբ ձայնավորահաջորդ ն-ին հաջորդում է հետնալեզվային գ, կ, ք, դ կամ խ հնչյունը (*զանգ, թանկ, հանք, անդեկ, անխեղք*): Այդ ժամանակ ն-ի բերանային փակվածքը իրականանում է ոչ թե լեզվի ծայրով ու վերին լնդերքով, այլ լեզվի հետնամասով և փափուկ քիմքով: Ն-ի այդ տարբերակը թեև հնչողությամբ փոքր-ինչ տարբեր է սովորական ն-ից, սակայն հայախոսի ականջի համար այդ տարբերությունը նկատելի չէ: Այդպիսի հետնալեզվային ռնգային հնչույթ առկա է անգլերենում (ո): Իհարկե, նշված դիրքում ն-ն

⁹ Տե՛ս Ա. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 58-59:

¹⁰ Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, նշվ. աշխ., էջ 19:

կարող է արտաբերվել նաև իր հիմնական՝ առաջնալեզվային տարբերակով, սակայն այդպիսի բռնազբոսիկ արտասանությունը բնորոշ չէ անկաշկանդ խոսքին:

Համաձայն Ա. Խաչատրյանի կիրառած եզրաբանության՝ ըստ արտաբերման եղանակի բաղաձայնները լինում են **հպական** (երկու հպվածքով) և **նեղվածքային**¹¹ (մեկ հպվածքով և նեղվածքով): Հպականները, ըստ արգելքի հաղթահարման եղանակի, լինում են **պայթականներ** և **կիսաշփականներ**: Նեղվածքայինները, ըստ նեղվածքի մեծության, լինում են **շփականներ** և **ձայնորդներ**: Ձայնորդները, ըստ արձագանքարանի բնույթի, իրենց հերթին լինում են **ոնգայիններ** և **ոչ ոնգայիններ**: Կարելի է ավելացնել նաև, որ «ըստ ֆիզիկական բաժանման՝ ձայնորդները առանձնանում են թե՛ հպական և թե՛ նեղվածքային բաղաձայններից՝ կազմելով մի առանձին խումբ, որը նմանվում է ձայնավորներին»¹²: Այսինքն, ըստ ֆիզիկական բնույթի, առանձնացվում են 3 տեսակի բաղաձայններ՝ **պայթականներ**, **շփականներ** և **ձայնորդներ**:

Նշված եզրաբանությունը, սակայն, ունի որոշակի թերություններ, որոնք թույլ չեն տալիս արտահայտելու մի շարք հնչյունական առանձնահատկություններ: Այսպես, **հպվածք** եզրույթը հստակ սահմանված չէ և երկիմաստ է: Բերանի խոռոչում հպվածք առկա է ոչ միայն հպական կոչված հնչյունների, այլև ձայնորդ Լ-ի, շփական վ-ի և Ֆ-ի դեպքում, որոնք հպականներ չեն համարվում: Հետևաբար հպվածքը պետք է տարբերակել **փակվածքից**: Վերջինս արգելափակում է օդի հոսանքը տվյալ (բերանի կամ քթի) խոռոչով: Իսկ **հպվածք** նշանակում է, որ երկու բան հպվել են իրար, սակայն դա դեռ չի նշանակում, թե արգելափակվել է օդի հոսանքը: Հպվածքը մի գործողության այնպիսի արդյունք է, որը ոչ միշտ է փակվածք: Մասնավորապես ձայնորդ Լ-ի դեպքում՝ լեզվի ծայրը և վերին լնդերքը, շփականներ վ-ի և Ֆ-ի դեպքում ստորին շուրթը և վերին կտրիչները հպվում են իրար՝ առաջ բերելով յուրատեսակ երկատված (եզրային) բացվածք (նեղվածք կամ ճեղք): Փակվածքը հպվածքի մասնավոր դեպք է:

Լիարժեք չէ նաև **նեղվածք** եզրույթի իմաստավորումը: Հպվածքի հակադիր երևույթը բնավ էլ նեղվածքը չէ (դրանք իրար չեն բացառում և որոշ հնչյունների արտաբերման դեպքում առկա են միաժամանակ): Մինչդեռ փակվածքին հակադրվում է **բացվածքը**, որը կարող է լինել լիակատար (լիաբացվածք, որ բնորոշ է ձայնավորներին) և թերի (թերբացվածք): Թերբացվածքը կարող է լինել նեղվածք (որ բնորոշ է ձայնորդներին) և ճեղք (որ բնորոշ է շփականներին): Մ և ն հնչյունների դեպքում առկա է նեղվածք, այլ ոչ թե ճեղք (նեղվածքն ավելի լայն է, քան ճեղքը): Ահա թե ինչու սխալ է դրանք շփական համարելը:

¹¹ Եզրույթների համար տե՛ս Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, նշվ. աշխ., էջ 18:

¹² Նույն տեղում, էջ 23:

Տրամաբանորեն ճիշտ չէ նաև «շփական/ձայնորդ» հակադրությունը, քանի որ **շփական** եզրույթը վերաբերում է հնչյունի արտաբերման եղանակին, իսկ **ձայնորդ** եզրույթը՝ հնչյունի մեջ ձայնի և աղմուկի փոխհարաբերությանը:

Հարմար չէ նաև «պայթական/կիսաշփական» հակադրությունը: Նկատի առնվող հնչյուններին բնորոշ արգելքը հաղթահարվում է պայթյունի (բ, պ, փ, գ, կ, ք, դ, տ, թ) կամ կիսապայթյունի (ձ, ծ, ց, ջ, ճ, չ) ձևով: Հետևաբար, ըստ արգելքի հաղթահարման բնույթի, դրանք տարբերակվում են որպես պայթականներ և կիսապայթականներ: Իսկ **կիսաշփական** (ավելի ճիշտ՝ **պայթաշփական**) եզրույթը բնութագրում է **ձ, ծ, ց, ջ, ճ, չ** բարդ հնչյուններն ըստ կազմության (պայթական+շփական): Ու թեև դրանց կազմում կա շփական բաղադրիչ, բայց դրանք ավելի շուտ (և ավելի շատ) պայթականներ են, քան շփականներ: Այսինքն՝ դրանք պայթականների տարատեսակ են, այլ ոչ թե շփականների, քանի որ չունեն շփականների մի էական հատկանիշը՝ օդի հոսանքի ազատ ու տևական անցումը ճեղքով, և ունեն պայթականների ամենաէական հատկանիշը՝ օդի հոսանքի ակնթարթային դադարը:


Այս և այլ ճշգրտումների ենթարկված զգրաբանությամբ կարելի է կատարել հնչյունների հիմնական տեսակների հետևյալ համառոտ դասակարգումը՝ նկատի ունենալով առավելապես հայերենի հնչյունական համակարգը:

Հնչյունները, ըստ արտաբերման եղանակի, նախ բաժանվում են երկու խմբի՝ **բացվածքային** և **փակվածքային**: Փակվածքայինները լինում են **պայթական** և **կիսապայթական** (պայթաշփական)¹³: Բացվածքայինները լինում են **լիաբացվածքային** (ձայնավորներ) և **թերբացվածքային**: Լիաբացվածքայինները լինում են **երկբացվածքային** (ոնգայնացած ձայնավորներ)¹⁴ և **մենաբացվածքային** (չոնգայնացած ձայնավորներ): Թերբացվածքայինները (որոնք բոլորը մենաբացվածքային են) լինում են **նեղվածքային** (ձայնորդներ) և **ճեղքային** (շփականներ): Նեղվածքայինները (ձայնորդներ) լինում են **ոնգային** (ն, մ) և **բերանային**: Բերանայինները լինում են **հպվածքով** (լ) և **առանց հպվածքի**: Վերջիններս լինում են **թրթռուն** (ր, ռ) և **ոչ թրթռուն** (սահուն) (յ): Ճեղքայինները (շփականները) նույնպես լինում են **հպվածքով** (վ, ֆ) և **առանց հպվածքի**: Վերջիններս լինում են **հազագային** (հ) և **ոչ հազագային**: Ոչ հազագայինները լինում են **խոպոտ** (թրթռուն) (դ, ի) և **ոչ խոպոտ** (ոչ թրթռուն): Ոչ խոպոտները լինում են **սուլական** (զ, ս) և **չչական** (ծ, շ): Այս դասակարգումը (հայերենի օրինակով) ներկայացված է **գծապատկեր 1**-ում:

¹³ Պայթականներն ու պայթաշփականները փաստորեն **երկփակվածքային** հնչյուններ են և իրարից տարբերվում են բերանային փակվածքի լուծման (կտրուկ պայթման կամ շփապայթման) եղանակով:

¹⁴ Հայերենում ոնգայնացած ձայնավոր հնչույթներ չկան, բայց առկա են, օրինակ, ֆրանսերենում:

Հնչյունների դասակարգում՝ ըստ արտաբերման եղանակի



Երկաստիճան տրոհմամբ այս դասակարգման դեպքում բոլոր հակադրությունները տրամաբանական են ու փոխբացառող: Այս հանգամանքը համոզիչ է դարձնում գիտական կադապարը (տեսությունը) և նպաստում դրա արագ ընկալմանը, որ կարևոր է հատկապես մանկավարժական տեսակետից:

2. Հումանիշները, հականիշները, համանունները, հարանունները բառերի՝ տեսակներ են, թե՛ բառերի հարաբերության տեսակներ:

Գերիշխող է առաջին տեսակետը¹⁵: Բայց տվյալ դեպքում երբ խոսքը բառերի տեսակների մասին է, ապա նշանակում է, որ ցանկացած բառ ինքնին կարող է բնութագրվել որպես հումանիշ, հականիշ, համանուն կամ հարանուն, որ անհերթեթ է, անտրամաբանական: Այդպիսի բնութագրում («հումանիշ», «հականիշ» և այլն) կարող է ունենալ ոչ թե

¹⁵ Տե՛ս Պ. Պողոսյան, Հայոց լեզու. օժանդակ ձեռնարկ բուհ ընդունվողների համար, Եր., 1969, էջ 64, Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու. բառագիտություն, Եր., 1993, էջ 66, Դ. Գյուրջինյան, Ա. Գալստյան, Թ. Ալեքսանյան, Մայրենի – 6, Եր., 2007, էջ 53, Լ. Եզնկյան, Ա. Մարգարյան, Ռ. Մաքսպետոյան, Հայոց լեզու – 10 (հումանիտար հոսքի համար), Եր., 2009, էջ 81:

բառն ինքնին, առանձին վերցրած, այլ երբ նկատի է առնվում առնվազն երկու բառի փոխհարաբերություն: Հետևաբար նշված երևույթներն ամփոփող խորագիրը պետք է ձևակերպվի որպես «**Բառերի ձևախմաստային հարաբերության տեսակներ**»: Նշանակում է, որ խոսքը ոչ թե բառերի տեսակների մասին է, այլ բառերի **հարաբերության** տեսակների մասին: Այսինքն՝ դասակարգման առարկան ոչ թե բառերն են (կամ բառապաշարը), այլ բառերի միջև հնարավոր ձևախմաստային հարաբերությունները, որոնց հիմնական տեսակներն են հոմանիշությունը, հականիշությունը, համանունությունը, հարանունությունը: Ցավալի է, որ այս թյուրըմբռնումը արմատավորվում է՝ դպրոցից սկսած:

Բառերի ձևախմաստային հարաբերությունների դասակարգման ամբողջական պատկերը ներկայացված է **գծապատկեր 2**-ում:

Գծապատկեր 2

Բառերի ձևախմաստային հարաբերությունները

| | | ՁԵՎ | | |
|-------|------------|--|---|--|
| | | նույն | նման | տարբեր |
| ԻՄՍՍՍ | նույն | - | Բառային տարբերակում (սպիտակ – [խոս.] սիպտակ – [բրբռ.] սիֆտակ) | Նույնանիշություն (սպիտակ – ճերմակ, ուղի – ճանապարհ) |
| | նման (մոտ) | Բազմիմաստություն (ճերմակ գ. 1. «սպիտակ գույնը», 2. «սպիտակ ձի») | Հարանիշություն [նույնարմատ հոմանիշներ] (կաթնավուն – կաթնագույն) | Հոմանիշություն [տարարմատ հոմանիշներ] (ճերմակ – ձյունասպիտակ) |
| | տարբեր | Համանունություն (սպիտակ [գունանուն] – Սպիտակ [տեղանուն]) | Հարանունություն (սպիտակ – պիտակ, ցուցում – ցուցմունք) | Տարանիշություն («անկապ» բառեր) |
| | հակառակ | Հակիմաստություն [բնեռացված բազմիմաստություն] (պարապեղ չք. 1. «պարապ մնալ», 2. «գբաղվել») | Ժխտանիշություն (սպիտակ – ոչ սպիտակ, արի – անարի, հաս – չհաս, գոհ – ողբոհ) | Հականիշություն (սպիտակ – սև, կարճ – երկար) |

Այս հանգամանակից դասակարգումն ունի նախ և առաջ գիտական արժեք, սակայն կարող է օգտակար լինել նաև բուհական ուսուցման մեթոդաբանության առումով, քանի որ թույլ է տալիս հստակ

պատկերացնելու բառերի ձևախմբաստային հարաբերությունների տեսակների առանձնացման հատկանիշերն ու տրամաբանական հենքը:

3. *Այսինքն, այն է* բառերը ստորադասական կամ համադասական շաղկապն էր են, թե՛ վերաբերականներ:

Բացարձակ իշխում է առաջին տեսակետը՝ իր մի շարք իրարամերժ մոտեցումներով ու անվանումներով¹⁶: Առկա են «ստորադասական շաղկապ»¹⁷, «(ստորադասական) մեկնական շաղկապ»¹⁸, «ստորադասական բացահայտական շաղկապ»¹⁹, «ստորադասական բացահայտման շաղկապ»²⁰, «համադասական բացահայտման շաղկապ»²¹ բնորոշումները: Սակայն սրանք բոլորն էլ առաջացնում են անլուծելի հակասություններ: Խնդիրն այն է, որ *այսինքն, այն է* բառերը բացարձակ նույն նշանակությամբ հանդիպում են մի կողմից՝ ստորադասական հարաբերությամբ կապված անդամների՝ բացահայտյալի ու բացահայտիչի²² միջև, մյուս կողմից՝ համադասական հարաբերությամբ կապված բաղադրիչ նախադասությունների միջև: Մ. Ասատրյանը բերում է այսպիսի օրինակ՝ «Գլխավոր մթերքները, *այսինքն*, հացը, միսը, շաքարը, առատ են»՝ ընդգծված բառը համարելով համադասական շաղկապ: Բայց այդ բառը կարող է զեղչվել առանց նախադասության իմաստը փոխելու, և այդ դեպքում կունենանք ոչ թե համադասական, այլ բացահայտյալ-բացահայտիչ ստորադասական կապակցություն: Այս հակասությանը հեղինակը լուծում չի տալիս: Ստացվում է, որ բացահայտյալ-բացահայտիչ կապակցությունը համադասական է, քանի որ, հեղինակի բառերով ասած, «երկրորդը առաջինի բացահայտումն է այլ բառով կամ այլ կապակցությամբ կրկնելու միջոցով»²³:

Մ. Աբրահամյանը բերում է նմանատիպ օրինակ՝ «Մեր մասնագետներից կազմված արշավախումբը ուղևորվեց դեպի վեցերորդ աշխարհամասը, *այսինքն (այն է)*՝ Անտարկտիդան»՝ ընդգծվածները, սակայն, համարելով ստորադասական շաղկապներ²⁴: Նա նույն տեղում

¹⁶ Ռուսերենագիտության մեջ ևս կա այս տեսակետը, հմմտ.՝ https://ru.wiktionary.org/wiki/то_есть

¹⁷ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 819-820:

¹⁸ Պ. Շարաբխանյան, Գրաբարի շաղկապները, Եր., 1960, էջ 45, 50, նաև՝ Վ. Առաքելյան, Պարզ նախադասություն (Մ. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, շարահյուսություն, Եր., 1975), էջ 201:

¹⁹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 457:

²⁰ Մ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Եր., 1975, էջ 222-223, Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 489:

²¹ Է. Աղայան, Հ. Բարսեղյան, Հայոց լեզու, դասագիրք 5-7-րդ դասարանների համար, Եր., 1970, էջ 334, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Եր., 1983, էջ 425, 431:

²² Այսպիսի բացահայտիչը երբեմն առանձնացվում է՝ անվանվելով մեկնական բացահայտիչ (տե՛ս Հ. Պետրոսյան, Մ. Գալստյան, Թ. Ղարազցույան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 212-213):

²³ Մ. Ասատրյան, նշվ. աշխ., էջ 431:

²⁴ Տե՛ս Մ. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 223:

նան շեշտում է. «Դա այդպես է թե՛ նախադասություններ, թե՛ նախադասության անդամներ կապելու դեպքում»: Մինչդեռ նույն հեղինակը նույն աշխատության մեկ այլ տեղում գրում է. «Ստորադասական շաղկապներն արտահայտում են ստորադասական հարաբերություններ՝ կապելով ստորադաս նախադասությունը գերադասին»²⁵: Եվ ընդհանրապես, ստորադասական շաղկապները կապակցում են միայն բաղադրիչ նախադասություններ, բայց ոչ՝ նախադասության սովորական անդամներ: Այս առիթով Գ. Ջահուկյանը գրում է. «Ստորադասական շաղկապները հանդես են գալիս որպես նախադասությունների հարաբերիչներ»²⁶: «Ստորադասական շաղկապները ...պարտադրաբար դրվում են դիմավոր բայերի հետ, այսինքն՝ հանդես են գալիս որպես նախադասությունների կապակցության արտահայտիչներ»²⁷:

Այստեղ բացահայտվում է նաև մի հակասություն: Նշված բառերը պարունակող բաղադրիչ նախադասությունները այդ բառերը կորցնելու դեպքում սովորաբար անջատվում են միջակետով և համարվում միմյանց համադաս նախադասություններ: Կամ, հակառակը, միջակետով տրոհված համադաս նախադասությունների որոշ տարատեսակների դեպքում ազատ կերպով կարելի է ավելացնել նշված բառերը: Օրինակ. *Մենք ուշանում ենք. [այսինքն] պետք է շտապել: Այս կամուրջը հմուտ վարպետներ են կառուցել. [այսինքն] կարող ենք վստահ լինել, որ այն անվտանգ կձառայի սերունդներին: Մանկահասակ երեխաները փորձում էին որևէ գործ անել. [այն է] աղջիկը բակն ու տունն էր ավլում, տղան ջրում էր այգին*:²⁸

Ստորադասական շաղկապների բնորոշ հատկանիշերից է բարդ նախադասության պարզեցման դեպքում հարաբերակից կապով փոխարինվելը²⁹ (*որպեսզի – համար, որովհետև – պատճառով, եթե – դեպքում* և այլն): Նշված բառերը գուրկ են նման հատկությունից:

Որոշ հեղինակներ երբեմն խուսափել են նշված բառերի խոսքիմասային պատկանելությանը անդրադառնալուց: Այսպես, Մ. Աբեղյանը «Աշխարհաբարի շարահյուսություն» աշխատության մեջ դրանք համարում է մեկնական կապակցական բառեր, որոնց օգնությամբ «երկրորդ խոսքով (կամ բառով) բացատրվում է առաջին խոսքի (կամ բառի) միտքը»³⁰: Վ. Առաքելյանը «Հայերենի շարահյուսություն» մենագրության մեջ գրում է. «Բացահայտիչները շատ հաճախ ուղեկցվում են *այսինքն, այն է* մեկնական ու ընդհանրացնող բառերով, որոնք բացահայտիչը օժտում են ուժեղ տրամաբանական կտրուկությամբ, սահմա-

²⁵ Նույն տեղում, էջ 215:

²⁶ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 450:

²⁷ Նույն տեղում, էջ 451:

²⁸ Օրինակները տե՛ս **Ս. Աբրահամյան** Հայերենի կետադրություն, ուսումնական ձեռնարկ, Եր., 2002, էջ 20:

²⁹ Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 453:

³⁰ **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 546:

նագատումով և առանձնապես գիտական խոսքի յուրահատկությամբ»³¹: Հ. Օհանյանը գրում է. «Բացահայտյալը և բացահայտիչը երբեմն կապակցվում են *այսինքն, այն է* և այս կարգի բացահայտման նշանակություն արտահայտող բառերի միջոցով: Այս դեպքում ավելի է ընդգծվում, հետևաբար և ճշգրտվում ու որոշակի դառնում բացահայտիչը»³²: Ս. Աբրահամյանը «Հայերենի կետադրություն» ձեռնարկում օգտագործել է «մեկնական բառեր»³³ բնորոշումը: Նույն հեղինակը մեկ այլ դեպքում դրանք բնորոշել է որպես «կապակցող բառական միջոցներ» բացահայտյալի և բացահայտիչի միջև³⁴: «Մեկնական բառեր» բնորոշումն են նախընտրել նաև Ա. Պապոյանն ու Խ. Բաղիկյանը³⁵:

Այս բոլոր անորոշությունները, անհստակություններն ու հակասությունները լուծվում են, եթե նշված բառերը համարվեն **բացահայտման վերաբերականներ**³⁶: Դրանք վերաբերական են, քանի որ ընդգծում, շեշտում են բացահայտման հարաբերությունը թե՛ նախադասության անդամների, թե՛ նախադասությունների միջև՝ անկախ դրանց միջև համադասական կամ ստորադասական կապի առկայությունից: Մրանք միանգամայն համապատասխանում են բացահայտման վերաբերականների սահմանմանը. մատնանշում են, թե խոսքի տվյալ հատվածը նախորդի բացատրությունն է, լուսաբանումը, ճշգրտումը կամ ամփոփումը (*արդ, այսպիսով, մի խոսքով, ասենք, այսպես ասած, կարճ ասած, դիցուք, ավելին* և այլն)³⁷:

Եզրակացություն

Այսպիսով, հայ լեզվաբանության մեջ տարածում գտած 3 տարբերմունքների քննարկման ու վերլուծության հիման վրա արվում է հետևյալ եզրակացությունը:

1. Ռնգային ձայնորդ **մ** և **ն** հնչյունները ոչ թե հպական (պայթական) կամ շփական, այլ նեղվածքային բաղաձայններ են:

2. Հոմանիշները, հականիշները, համանունները, հարանունները ոչ թե բառերի տեսակներ են, այլ բառերի ձևախմբային հարաբերության տեսակներ:

3. *Այսինքն, այն է* բառերը ոչ թե համադասական կամ ստորադասական շաղկապներ են, այլ բացահայտման վերաբերականներ:

³¹ Տե՛ս **Վ. Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Եր., 1958, էջ 276:

³² Տե՛ս **Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Եր., 1976, էջ 213:

³³ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայերենի կետադրություն, էջ 41:

³⁴ Տե՛ս **Ս. Աբրահամյան**, Հայոց լեզու, շարահյուսություն. բուհական ձեռնարկ, Եր., 2004, էջ 36:

³⁵ Տե՛ս **Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 133:

³⁶ Բացահայտման վերաբերականների (եղանակավորող բառերի) համար երբեմն գործածվում են այլ անվանումներ՝ **ճշգրտման** (**Հ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջ 196), **մեկնական** (**Է. Աղայան, Հ. Բարսեղյան**, նշվ. աշխ., էջ 328):

³⁷ Տե՛ս **Յու. Ավետիսյան, Հ. Զաքարյան**, Ձևաբանություն, Եր., 2015, էջ 183:

Բանալի բառեր – *ննգային ձայնորդ, հպական, շփական, նեղվածքային, բառերի ձևաինաստային հարաբերություն, բացահայտման վերաբերական*

ОГАНЕС ЗАКАРЯН – *О различных точках зрения в армянской лингвистике.* – В любой области науки время от времени возникают и получают довольно широкое распространение мнения, которые неадекватно отражают реальное положение вещей и/или вызывают противоречия в теории и даже на практике. Статья посвящена трём вопросам языкознания, в частности армянского, связанным с такого рода точками зрения, которые помимо научного имеют и педагогическое значение. Ответы на них таковы:

1. Назальные сонорные звуки **ն** (n) и **մ** (m) являются не смычными (взрывными) или фрикативными, а теснинными согласными.
2. Синонимы, антонимы, омонимы и паронимы это не виды слов, а виды соотношения слов по форме и значению.
3. Слова *սյուհնքն*, *սյն է* ("то есть") это не сочинительные или подчинительные союзы, а выявительные модальные частицы.

Ключевые слова: *назальный сонорный, смычной, фрикативный, теснинный, соотношение слов по форме и значению, выявительная модальная частица*

HOVHANNES ZAKARYAN – *Some Disagreements Existing in the Armenian Linguistics.* – Fairly widespread opinions sometimes exist in any field of science which do not adequately reflect the reality and / or cause contradictions in theory and even in practice. This article discusses three linguistic (in particular Armenological) problematic questions concerning the opinions of this kind and having scientific and pedagogical value. As a result of discussion, these questions get the following responses accordingly.

1. Nasal resonant sounds **ն** (n) and **մ** (m) are not occlusive (plosive) or fricative, but are approximant consonants.
2. Synonyms, antonyms, homonyms and paronyms are not kinds of words, but kinds of relation of words in form and meaning.
3. The words *սյուհնքն* ("i.e."), *սյն է* ("that is") are not coordinative or subordinating conjunctions, but reveal modal particles.

Key words: *nasal resonant, occlusive, fricative, approximant, relation of words in form and meaning, reveal modal particle*